

Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 13. Օտարերկրյա պետությունում Հայաստանի
Հանրապետության ներկայացուցչական ծառայության
մարմինների ղեկավարումը

1. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչական ծառայության մարմնի ղեկավարը կարող է լինել Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը (այսուհետ՝ դեսպան) կամ գործերի հավատարմատարը՝ սովյալ պետության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչը (այսուհետ՝ մշտական ներկայացուցիչ):

2. Դեսպանը և մշտական ներկայացուցիչը (ներկայացուցչական ներկայացուցիչներ) նշանակվում և հետ են կանչվում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. ~~Դիվանագիտական ներկայացուցիչները նշանակվում են մինչև չորս տարի ժամկետով, իսկ պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո անմիջապես այլ պետությունում դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում նշանակվելու որևէ անհրաժեշտության դեպքում,՝ մինչև երեք տարի ժամկետով: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետները կարող են երկարաձգվել կամ կրճատվել սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով: հոդվածի համաձայն, կարող է երկարաձգվել 2 տարուց ոչ ավել ժամկետով: Պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո դիվանագետը առնվազն 2 տարի պետք է աշխատի արտաքին գործերի նախարարության համակարգում, որից հետո միայն կարող է նշանակում ստանալ մեկ այլ երկրում:~~

4. Դիվանագիտական ներկայացուցիչը նշանակումից հետո կարող է հրավիրվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով՝ հանդիպման կամ աշխատանքային քննարկման:

5. Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

6. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչական ծառայության մարմնի ղեկավարի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականություններն ամբողջ ծավալով կատարում է Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարը, որին արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ

պաշտոնի նշանակում և ազատում է դեսպանը կամ մշտական ներկայացուցիչը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ արտաքին գործերի նախարարը՝ տվյալ դիվանագիտական ծառայության մարմնի ամենաբարձր դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների թվից:

Հոդված 31. Դիվանագետի ռոտացիան

1. Առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակված դիվանագետի ծառայությունն սկսվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում:

2. Դիվանագետի ծառայությունն ընթանում է ռոտացիայի սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում առնվազն երկու տարի և օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում՝ երկու տարի իրար հաջորդող աշխատանքային փուլերով:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության ժամկետն անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել, սակայն ~~վեց~~ տարուց ոչ ավելի ժամկետով:

4. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության ընթացքում դիվանագետի համաձայնությամբ թույլատրվում է դիվանագետի տեղափոխումն օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության այլ մարմին ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով, պայմանով, որ պահպանվեն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված ժամկետները:

5. Չի թույլատրվում օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում աշխատանքային փուլի ժամկետը լրանալուց անմիջապես հետո դիվանագետի նշանակումն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մեկ այլ մարմնում:

6. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետի ծառայությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝

- 1) անձնական դիմումի համաձայն.
- 2) իր գործառույթները կատարելու անհնարինության դեպքում.
- 3) միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ հանգամանքներ առաջանալու դեպքում.
- 4) ծառայողական անհրաժեշտության դեպքում:

7. Ռոտացիայի համար հավասարազոր պաշտոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

8. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 2-4-րդ կետերում նշված պաշտոններից օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում նշանակում կատարվում է, եթե դիվանագետն ունի այդ պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճանը: